

Կոմիտաս

Բուսաբարեվ

Սնունդը՝ ծառին

Ծառի՛կ, ծառի՛կ,
Շունչդ անառիկ.
Ի՞նչ ու ի՞նչպէս՝
Անջուր անլուր,
Քո բուռ ու կուռ,
Դալարում ես
Դէպի երկին փլռելով,
Ու ճիւղերդդ ջրելո՞վ:

Ծառն՝ արմատին

Բունի՛կ-բունիկ՝
Կաթնետունիկ.
Ի՞նչ, ու ինչպէ՞ս
Քո երակներ
Լուսոյ ակեր
Պալարում ես
Եռուն-եռուն կըրակելով,
Չեռուն-հեռուն ճըրագելո՞վ:

Բունը բարին

Յատուկ Պոէմ

Բարի՛կ–բարիկ՝
Շունչ-պարարիկ.
Ի՞նչ, ու ինչպէ՞ս
Տընիկ-տընիկ
Բազմածընիկ
Գալարում ես
Ոգի-ոգի նուագելով
Պահիկ-պահիկ հաւաքելո՞վ:

Բարը՝ ծաղկին

Ծաղի՛կ-տիրուն՝
Երկրի՛ սիրուն.
Էդ ի՞նչ ու ինչ
Թերթիկ ունես՝
Կարմիր–ձուն ես.
Ու լարում ես.
Բոլոր-մոլոր եռ թըշերով,
Ոլորուելով սեր նըշերո՞վ:

Ծաղիկը՝ տերեւին

Տերեւ-տերեւ,
Գըլխավերեւ,
Էդ ի՞նչ ու ի՞նչ
Առակ-առակ՝
Կանաչ-կարագ
Նըկարում ես.
Քու մատիկներ հեղուն-բեղուն
Ու պատիկներ եղուն–մեղո՞ւն:

Բոլորն՝ իրար

Միանալո՛վ՝
Հիանալով: